ԿԻՆԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
(Ըստ սասունցիների ազգագրական սովորույթների)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հնուց անտի մարդկային հասարակության մեջ որոշված են եղել նրա անդամների տեղն ու դիրքը, պարտականություններն ու իրավունքները, որոնք տարբերվել են ըստ սեռատարիքային պատկանելության: Սեռատարիքային խմբերի բաժանվածությունը հատուկ է եղել համայնատոհմական կացութաձև ապրած բոլոր ժողովուրդներին, ինչի դրսևորումները պահպանվել են անգամ մինչև XXI դարը: Հայ իրականության մեջ դրանց պահպանմանը, անշուշտ, նպաստել են սոցիալ-տնտեսական և պատմաքաղաքական իրավիճակը, սովորութային իրավունքը, եկեղեցին: Դրանք հատկապես ակնառու դրսևորվել են նահապետական գերդաստանի նիստուկացում, որտեղ զբաղմունքները բաժանված էին՝ դրսի աշխատանքը տղամարդկանց, իսկ ներսինը՝ կանանց միջև: Հատկապես կարևորվում է գերդաստանի նահապետի ու նրա կնոջ դերը, որոնք, առաջնորդվելով նշված չափանիշներով, կարողանում էին հաստատուն պահել հասարակության հիմքը հանդիսացող ընտանիքի ամրությունը:

Հայ ժողովրդի սովորութային համակարգում կին թե տղամարդ դաստիարակվում էին իրենց դերին լիարժեք ծառայելու գիտակցությամբ: Հայ կինը պարտավոր էր հետևել ընդունված ավանդական որոշ չափանիշների՝ հնազանդություն, հավատարմություն, տնային աշխատանքներին նվիրվելու պատրաստակամություն, իր ու նոր ընտանիքի մշակութային միջավայրին հարմարվողություն և այլն: Կյանքը ընտանեկան խիստ պայմանների մեջ էր մշակել որոշակի սովորութային օրենքներ, կանոնակարգումներ, որոնց հետևում էին սրբությամբ: Կինը մանկուց դաստիարակվում էր ընտանիքի շահերի պաշտպանության և հավատարմության ու ավանդույթների պահպանման, հնազանդության ոգով:

Ամուսնուն հնազանդվելը *կնոջ կարևոր պարտականություններից մեկն էր: Այս պարտականության հետ սերտորեն կապված էր կնոջից հնազանդություն պահանջելու ամուսնու իրավունքը: Այս մասին են վկայում ոչ միայն ազգագրական նյութերը, այլև եկեղեցական գրականությունը, ձեռագիր մատյանները*[1]*: Կնոջ գործերին խառնվող, կանանց խոսակցությանը մեջ ընկնող, կնոջ թելադրանքով շարժվող տղամարդուն հասարակությունը ամոթանք էր տալիս. «Գնա, քո կնգա փեշի տակ մտի», «Գնգադ լաչիգ վրը քո գլխուն», «Գնա, կնգադ յազման կապա»: Կնոջը ենթակա տղամարդուն հաճախ դիմում էին իր կնոջ ա-*

[1] *Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 953, էջ 194բ, 196բ և այլն:*

նունով՝ «Իլգա Մուշո», «Փառռ Մուշո»[2]. դրանք տղամարդու համար ամենավիրավորական արտահայտություններից էին: Այս առումով տեղին է հիշել «Սասնա ծռեր» էպոսից հետևյալ հատվածը. «Մելիքի կնիկ՝ Իսմիլ խաթուն միտք էրավ, էսած. «իմ մոտեն տղա չելավ, էլնի, մեր ազգին տիրություն էնի. թե օր սասնեցոց մոտեն կրակ չառնինք, մենք կը մնանք շիվար»: Իսմիլ խաթուն թուղթ ճամպխեց Մհերին՝ գաս գլոխ իմ խետ մեկ էնիս: Ուր գողիկ լաչիկ լէ խետ օղարկեց՝ թէ չգաս, քանց ինձ կնիկ իս»: Մհերը համաձայնում է գնալ, այլապես՝ «օր ես չէրթամ, կ'էղնիմ կնգա կնիգ»[3]: Կնոջ կարևոր պարտականությունների շարքում ամուսնու տոհմանվան և դասային դրության ընդունումն էր: Ամուսնու տոհմանունն ընդունելն ուներ անգիր օրենքի կամ սովորութաիրավական պարտականության ուժ: Թեև այդ պարտականությունը օրենսդրական ոչ մի ակտով սահմանված չէր, բայց եղել է մշտապես գործող կարգ: Ամուսնու տոհմի համար մեծ անպատվություն էր, եթե կինը արհամարհում էր նրա տոհմանունը[4]:

Ամուսնական հավատարմությունը *կնոջ կարևորագույն պարտականությունն էր, որից ամեն մի նահանջ դաժանորեն պատժվում էր: Կնոջից պահանջվում էր լինել ավելի հանդուրժող, ողջախոհ և ամուսնուն հավատարիմ: Այս առթիվ տեղին է հիշել Ֆ. Էնգելսի հետևյալ արտահայտությունը. «Այն, ինչ կնոջ համար ոճրագործություն է համարվում և ծանր օրինական ու հասարակական հետևանքներ է առաջ բերում, այն տղամարդու համար պատվաբեր բան է համարվում կամ վատթարագույն դեպքում՝ բարոյական մի թեթև բիծ, որ նրանք հաճույքով են կրում»[5]: Ամուսնալուծության համար կնոջից բաժանվելու հիմնական պատճառներն էին չբերությունը, վարքը, հիվանդությունները, դիվահարությունը:*

Ամուսնու մահից հետո կինը պարտավոր էր մեկ տարուց ոչ պակաս մնալ ամուսնու տանը: Այդ տևողությունը կոչվում էր սգո *տարի: Ամուսնու մահվան տարին նշելուց հետո միայն կարող էր խոսք լինել երիտասարդ կնոջ բաժանքի մասին: Դա հանգուցյալի հիշատակը հարգելու բարոյահրավական տուրք էր՝ կոչված ծառայելու հանգուցյալից ծնված և ծնվելիք զավակի գույքային իրավունքների պաշտպանությանը: Եթե նա վաղաժամ ամուսնանար, որի սովորույթը չկար, կզրկվեր նաև գույքային իրավունքներից: Երկարատև անհայտ բացակայողի, կամ ամուսնու մահվան դեպքում կանոնական գրականությունը և ազգագրական սովորույթները այդ ժամկետը սահմանել են յոթ տարի:*

Կնոջ անձնական կարևոր պարտականություններից էր տան կրակարանն անշեջ պահելը: *Այս պարտականությունը շատ հին է և աղերսվում է կրոնական հին հավատալիքների հետ: Այն կինը, որի անգործության կամ անփու-*

---

[2] *Տեղեկությունները մեզ հաղորդեց իրինդաբնակ Արթին Հարությունյանը (տե՛ս Ռ. Ա. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), տետր 11, էջ 11-12, անձնական արխիվ, տետրեր 1-19, 1971-2005 թթ.:*

[3] *Նյութը սիրով տրամադրեց բանագետ Արուսյակ Սահակյանը:*

[4] *Այս մասին տե՛ս Վ. Հ ա ց ո ւ ն ի. Հայուհին պատմութեան առջև, Վենետիկ, 1936, էջ 34-35:*

[5] *Ֆ. Է ն գ ե լ ս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965, էջ 100:*

թության պատճառով հանգչում էր ընտանիքի կրակը կամ անթեղը, անարժան էր համարվում տանտիկին կոչվելու: Հայկական ժողովրդական մի ասացվածքի համաձայն՝ կնոջ մահը համեմատվում է տան օջախի հանգչելու հետ, ինչը մեծ դժբախտության նշան էր: Ամուսինը կնոջ մահը ողբում էր հետևյալ խոսքերով. «Մեկը չունիմ օճախս վառի, մեկը չունիմ տանս կրակը անի, ճրագը վառի»[6]: Եվ քանի որ կինն էր օջախի կրակի անշեջ պահելու պատասխանատուն, նա էլ սահմանել էր հետևյալ արգելքները. չթքել կրակի վրա, ջուր չլցնել, այն փոխ չտալ, երբեք չհանգցնել և այլն: Թոնիր - օջախը հայոց մեջ դիտվել է սրբություն: Ժողովրդական ընկալմամբ ընտանիք, օջախ բառերը հոմանիշ են և հաճախ գործածվել են տուն, ծուխ, երբեմն նաև՝ տանտիրուհի, տանտիկին իմաստներով: Պաշտամունքային առումով օջախները նախնիների պաշտամունքի վայրն էին, ողջերի համար պահպանիչ էին ծառայում, խորհրդանշում էին տոհմի հարստությունը, հարատևությունը, առողջ սերունդը, բարեկեցությունը: Այս բոլորի երաշխավորն ու պահպանողը տանտիկինն էր[7]:

Տղամարդը գույքային, այդ թվում՝ ամուսինների, ծնողների և զավակների ու մերձավոր ազգականների ինչքային հարաբերություններում ճանաչված էր սեփականության իրավունքի լիարժեք սուբյեկտ: Մինչդեռ կինը այդ իրավունքը չուներ իր ամուսնու նույնպիսի սեփականության նկատմամբ, ինչպես և համատեղ կյանքի ընթացքում ամուսնու ձեռք բերած ունեցվածքի ու երեխաների նկատմամբ:

Միայն տարիների ընթացքում, արդեն զավակների տեր կինը աստիճանաբար ձեռք էր բերում մասնակի ազատություն: Կինը հասարակության լիարժեք անդամ էր դառնում միայն մեծ տարիքում: Ի նշան հարգանքի, երբ բազմազավակ տարեց կին էր անցնում, ջահել տղամարդիկ ոտքի էին կանգնում և խոնարհվում, դադարեցնում էին ամեն կարգի կռիվ ու վիճաբանություն, երբ միջամտում էր նա: Զգալի տարբերություն կար լեռնային ու հովտային շրջաններում կնոջ կյանքի ձևերի ու տնտեսության մեջ կնոջ ունեցած դերերի միջև: Լեռնային շրջաններում սովորաբար կայուն պահպանված էին կյանքի հնավանդ ձևերը, մարդիկ ապրում էին կատարյալ նահապետական պարզության մեջ, մինչդեռ հովտային շրջաններում, շփման ազդեցությամբ կնոջ կենցաղավարման եղանակը փոխվում և բազմատեսակ էր դառնում: Այս առումով, սակայն, բացառություն է Սասունը: Այստեղ, ի տարբերություն գերազանցապես դաշտավարությամբ զբաղվող գերդաստանների, կանայք առավել չափով էին մասնակցում և տղամարդուն հավասար լծվում դաշտային աշխատանքի: Սասունում կանանց մի մասը, հիմնականում երիտասարդները, մնում էին տանը և զբաղվում տնային ու հողագործական դժվարին գործերով, իսկ մյուսները

---

[6] *Տե՛ս Ա. Ղ լ տ չ յ ա ն. Հայ հին իրավունք.– «Ազգագրական հանդես», գ. XIV, Թիֆլիս, 1913, էջ 24-25:*

[7] *Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն, Ի. Ղ ա ր ի բ յ ա ն. Օջախ-թոնրի պաշտամունքի մի քանի սովորույթներն Աղձնիքում.– Ավանդական բանավոր ժառանգություն, ոչ նյութական մշակույթ, Միջազգային առաջին գիտաժողով, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման մասին» կոնվենցիայի շրջանակներում, հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 124-138:*

վարում էին սարվորի կյանք՝ ապահովելով կաթնամթերքների մշակումը և պահեստավորումը: Այս հանգամանքը որոշակիորեն բարձրացնում էր լեռնցի կնոջ, առանձնապես տանտիրուհու հեղինակությունը, որը ղեկավարում էր տնային տնտեսության մի շարք բնագավառներ:

Դաշտային շրջանների կանանց իրավունքները, լեռնային շրջանների կանանց համեմատ, բավականին սահմանափակ էին: Կնոջ՝ արտաքուստ ներփակված վիճակը ավելի շատ հետևանք էր պատմական անբարենպաստ իրողությունների, որոնց պատճառով հայ կինը ստիպված էր հեռու մնալ հասարակական կյանքից: Հայ կանանց այս կարգավիճակը հետազոտողները հաճախ բացատրել են սովորութային իրավունքով[8], սակայն սրա հետ մեկտեղ շատ կարևոր է նկատի ունենալ պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և հասարակական մշտափոփոխ գործոնները: Հատկապես երիտասարդ կանանց խիստ ու փակ կենսակերպը ոչ միայն պայմանավորված է եղել իրավաբարոյական պատկերացումներով, այլև պատմական անբարենպաստ իրողություններով: Դարեր շարունակ հայ ժողովրդի վրա բռնացել են բարբարոս ցեղեր՝ հաստատելով յաթաղանի, ալան-թալանի ու բռնության օրենքները: Այդ պայմաններում հայությունը հարկադրված է եղել երիտասարդ կանանց բոլոր հնարավոր միջոցներով հեռու պահել օտարի աչքից՝ «փակելով» նրանց տան մեջ, սահմանափակելով շփումները դրսի հետ, քողի տակ պահելով նրանց գեղեցկությունն ու հրապույրները[9]: Կինը երբեմն նույնիսկ ստիպված էր լինում տղամարդու հագուստ կրել՝ անձնական անվտանգության նկատառումներով: Լեռնային շրջաններում կինը համեմատաբար ազատ էր մասնակցելու ընտանեկան և հասարակական բնույթի խորհուրդներին: Այդ երևույթը պայմանավորված էր նաև վերը նշված հանգամանքով, որ լեռնային շրջաններում տղամարդկանց հիմնական մասը տարվա զգալի ժամանակը կտրված էր ընտանիքից և կամա-ակամա կինն ստիպված էր լինում միջամտել ընտանեկան, երբեմն նաև հասարակական լուծում պահանջող հարցերին: Լեռնային շրջաններում կանանց ընտանեկան ու հասարակական ակտիվությունը պայմանավորված էր նաև ռազմաքաղաքական հանգամանքներով. կանայք, տղամարդկանց ուժերը համալրելու նպատակով, ակտիվորեն մասնակցում էին քրդական և թուրքական հարձակումներից ու կողոպուտներից ինքնապաշտպանության գործին: Այս առումով որոշ ընդհանրություններ կար քրդուհիների հետ: Սովորաբար քուրդ կանայք քիչ էին ենթարկվում սահմանափակումների, աչքի էին ընկնում խիզախությամբ և քաջությամբ: Երբեմն տղամարդու պես հագնված ու զինված, հետևելով իրենց ամուսիններին, մասնակցում էին կռիվների[10]: Ըստ իրինդաբ-

---

[8] *Միջնադարյան գրավոր աղբյուրներում և օրենսգրքերում հայ կնոջ անհամեմատ ազատ ու տղամարդուն գրեթե հավասար իրավունքներին վերաբերող ուշագրավ ուսումնասիրություն ունի Ս. Բարխուդարյանը (տե՛ս Ս. Գ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում.– ՊԲՀ, 1966, № 2, էջ 25-40):*

[9] *Տե՛ս նույն տեղում:*

[10] *Տե՛ս Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 367, Ռ ա ֆ ֆ ի. Եզդիներ.– Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1956, էջ 518, Ռ ա ֆ ֆ ի. Ի՞նչ է քուրդը և ի՞նչ է թուրքը.– Երկերի ժողովածու, հ. 4, էջ 374,* М. М. Б а я з и д и. Нравы и обычаи курдов. М., 1972, с. 55 *և այլն:*

նակ ութսունամյա բանասաց Արթին Հարությունյանի, երբ քրդերի ավազակախումբը Սասնա Սեմալ գյուղի արոտավայրերում ավարառություն է արել, ավագ տարիքի կանանցից մեկը յուրային տղամարդկանց վախկոտությունը խարազանել է հետևյալ խոսքերով. «Իմ լաչին (գլխաշորը) ձեր գլխուն, վըրի եք բիվդի (պահ մտել), ըսոր տարան զգդալ, վաղ գդանին ձըր գնիգ»[11]:

Ընդհանուր առմամբ Սասունում կինը ամուսնու պատիվն ու «խիրաթն» էր համարվում, կնոջ խոսքն անհետևանք չէին թողնում: Նույնիսկ կնոջը հայհոյելու համար ամուսինը կամ նրա մերձավորները վրիժառության էին դիմում: Կնոջ մի խոսքը խրախուսում, սխրագործության էր մղում ամուսնուն կամ խրապես հուսահատեցնում նրան. «Գնգա խոսքը կեդին չընգնը» (կնոջ խոսքն անհետևանք չեն թողնի) ասում է սասունցին: Ազգագրագետ Ս. Պողոսյանի դիտարկմամբ՝ «Տղամարդու սեռային իդեալը ենթադրել և ենթադրում է ամրություն, համառություն, ուղղամտություն, նախաձեռնող, առաջ մղող և տիրապետող հատկանիշներ, իսկ կնոջ վարք ու բարքի սեռային իդեալին բնորոշ են եղել և են՝ նրբությունը, հնազանդությունը, պարկեշտությունը, զիջողականությունը, հավատարմությունը ընտանիքին և այլն»[12]:

Հ. Մեղավորյանը գրում է. «Տանտիկինը և մյուս ամուսնացած կանայք հայկական նահապետական ընտանիքում ավելի բարձր տեղ էին գրավում, քան նրանց նախնիները հռոմեական կամ հունական ընտանիքում: Տանտիկինը բացարձակորեն անկախ էր տնային գործերում: Տնտեսապես նա ներկայանում էր որպես ազատ անձնավորություն և նույնիսկ շատ գործերում ամուսինը դիմում էր նրա խորհուրդներին ու շատ հաճախ լսում նրան...»[13]:

Տան մեծ տիկնոջ խոսքն անգամ 1940–50-ական թվականներին դեռ օրենք էր հիսունն անց, առանձին ընտանիքների տեր որդիների համար, որոնք ոչ մի պատասխանատու քայլ չէին անում առանց նրա հետ խորհրդակցելու: Մեծ տիկնոջ խոսքը, կամքը վճռորոշ էր հատկապես որդիների ամուսնության հարցում: Բերենք մի օրինակ. երբ մեր զրուցակից բանասացի հորը ցանկացել են ամուսնացնել սիրած աղջկա հետ, տատը չի տվել իր համաձայնությունը՝ ասելով. «Նրա քեռին լավ մարդ չէ»՝ դրանով իսկ մատնանշելով աղջկա մորական կողմի բարոյական վատ բնութագիրը: Մեծ տիկինն ամեն ինչ անում էր որդիների ընտանիքների միջև տնտեսական հավասարություն ապահովելու համար: «Հորեղբայրս,– ասում է բանասացը,– աշխատում էր կարի արհեստանոցում: Երբ նա նոր հագուստ էր հագնում, տատս նախ շնորհավորում էր, ապա ասում. «Շատ լավն է, մի հատ էլ եղբորդ համար կարել տուր»: Հաջորդ օրը չափսերը վերցվում էին: Հետպատերազմյան սուղ տարիներին հենց որ հայրս ալյուր էր բերում տուն, տատս գոհունակություն էր հայտնում և ասում. «Մի պարկ էլ եղբորդ տուն տար»: Օջախը, տուն ու տեղը նրանց համար պաշտա-

---

[11] *Այս և հետագա նյութերի գերակշիռ մասը գրառվել են 1971-1973 թթ. (ԴԱՆ, տ. 11, էջ 11):*

[12] *Ս. Պ ո ղ ո ս յ ա ն. Կնոջ և տղամարդու խորհրդանիշները հայոց մշակութային համակարգում (ավանդական և ժամանակակից ընկալումներ).– Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2007, էջ 249:*

[13] *Տե՛ս Հ. Մ ե ղ ա վ ո ր յ ա ն. Ազգագրական և իրավաբանական ուսումնասիրություն հայ ընտանիքի և ամուսնության վերաբերյալ.– ՀՀ ԳԱԱ ՀԱԻ արխիվ, ֆ. 102, էջ 101:*

մունքի աստիճան սրբազան հասկացություն էր, և չէին հաշտվում այն լքելու մտքի հետ: Երբ հայրս և հորեղբայրներս տեղափոխվել էին Երևան, իրենց մորը չէին կարողացել համոզել մեկնել իրենց հետ: «Ո՞ւմ թողնեմ, այս հսկա «դիրլիզը (ունեցվածքը.– Ռ. Ն.)»,– պատճառաբանել էր տատս, թեև նրա ամբողջ ունեցվածքը հողե կտուրով մի տուն էր, մի ամբար և ցեցը կերած մի պահարան»[14]*:*

Հայաստանի պատմագրական գրեթե բոլոր շրջաններում գերիշխել է ընտանիքի նահապետական կենսաձևը, որի բնորոշ երևույթներից է եղել կանանց, առանձնապես հարսների նկատմամբ կիրառված սահմանափակումների համակարգը: *Կնոջ նկատմամբ արգելքները թեև ոչ այնքան խստությամբ սկսում էին կիրառվել դեռևս փոքր տարիքից, հարսնության շրջանում չափազանց խստանում էին և աստիճանաբար նվազում, երբ կինը դառնում էր մի քանի երեխաների մայր, հատկապես երբ հայտնվում էր ընտանիքի ղեկավարի՝* տան խոսողի՝ *նահապետի կնոջ կարգավիճակում, որով իր ձեռքն էր վերցնում գերդաստանի բոլոր կանանց ղեկավարությունը: Փոքր աղջիկների դաստիարակությունը ընտանիքի բոլոր հարսների ու կանանց հսկողության տակ էր, հատկապես՝ մեծ տանտիկնոջ: 4–5 տարեկանից սկսած նրանց սովորեցնում էին մաքրել տունն ու բակը, լվալ ամանեղենը, կատարել մեծերի հանձնարարականները: 7–8 տարեկանում սովորեցնում էին լվանալ աշխատանքից վերադարձած տղամարդկանց ոտքերը: Այդուհանդերձ, այդ տարիքում աղջիկ երեխաներին ծանր աշխատանքներ չէին հանձնարարվում՝ ասելով. «Աղջիկ երեխա է, մեղք է, պորտը տեղից կընկնի»: Նրանք կարող էին ազատորեն խաղալ տղաների հետ, սակայն զրկված էին դպրոց հաճախելու հնարավորությունից և իրավունքից: 8–12 տարեկան աղջիկների դպրոց հաճախելը սովորույթի ուժով արգելված էր՝ «Աղջիկ երեխան ինչ, ուսումն ինչ»: Փոխարենը նրանք հմտանում էին արհեստների մեջ, հատկապես տնայնագործության մեջ. սովորում էին բուրդ զգել, ճախարակ պտտել, իլիկ մանել, խմոր հունցել, հաց թխել, այծ ու ոչխար կթել, պանիր մակարդել, լվացք անել, գուլպա, կարպետ, գորգ գործել, շոր կարել, կարկատել, ասեղնագործել և այլն*[15]*: Այդ շրջանում աղջիկներն*

---

[14] *Ներկայացվող նյութերը գրառվել են 2008 թ. Երևանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Իլյիչ Մնիչյանից:*

[15] *Հայ կնոջ մասին ուսումնասիրություն է կատարել ռուս հայտնի ճանապարհորդ, բժշկապետ Ա. Ելիսեևը, որը 1860-ական թվականների կեսերին Ռուսաստանի Աշխարհագրական ընկերության հանձնարարությամբ ճանապարհորդել է Փոքր Ասիայում, այդ թվում և Արևմտյան Հայաստանում: Արևելքում կնոջ դրության մասին դասախոսությունները տպագրել է Պետերբուրգում լույս տեսնող* “Северный вестник” *ամսագրի 1988 թ. համարներում: Հայ կանանց վերաբերյալ հատվածը թարգմանաբար լույս է տեսել «Մշակում», «Արձագանք» շաբաթաթերթում, «Արևելյան մամուլում» (այդ մասին մանրամասն տե՛ս Ա ն. Զ ա ք ա ր յ ա ն. Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին, Երևան, 2004, էջ 100–104): «Ուրիշ արարած է նոցա (իմա՝ թրքուհու և պարսկուհու – Ռ. Հ.) դրացի հայուհին. նա միշտ ոտի վերա է՝ անխոնջ աշխատելու և միշտ զբաղված առտնին գործերով. կարելի է համարձակ ասել, որ աշխատանքը նորա ոսկե ձեռքերից ցած չէ ընկնում: ...Հայուհին, լինի նա աղքատ, հարուստ, ամուսնացած և թե օրիորդ, բացի ծանր աշխատանքներից, զբաղվում է և արհեստներով, կարծես, հենց նորա համար, որպեսզի յուր ժամանակը իզուր չկորցնե և բավականություն տա յուր մշտապահանջ աշխատանաց ծարավին: Ինչ որ հագնում է հայ ընտանիքը, ոչ միայն կարում է, այլև պատրաստում է ինքը՝ ջանասեր հայուհին. նա հավասար ճարպկությամբ թե կարում է,*

ավելի շատ էին օգնում մեծահասակ կանանց, արգելվում էր նրանց շփումը տղաների հետ: Այս կանոններից շեղումը արժանանում էր հասարակության նախատինքին: Իսկ աղջկա անաղարտությունն ու համեստությունը եղել է իր ընտանիքի, նաև ազգատոհմի պատվի հարցը:

Աղջիկներին հարսնության էին նախապատրաստում որոշակի վարքականոնների համաձայն. լինել աշխատասեր՝ «հարսը պարապ չի մնա», առանց մոր կամ տանտիկնոջ իմացության որևէ տեղ չգնալ, միշտ լինել պատրաստակամ հանձնարարականների կատարմանը, պահպանել չխոսկանության, խուսափման սովորությունները: Մինչև հարս գնալը աղջիկը որքան շատ հմտացած լիներ տնային գործերում, որքան շատ բան իմանար ու սովորեր, այնքան լավ համարում կունենար: Հարսն էլ իր հերթին իր հաջորդին էր ավանդում այն, ինչ սովորել էր մորից և մյուս կանանցից: Այսպիսով, իր հայրական տանը աղջիկը ստանում էր այնպիսի դաստիարակություն, որն ապահովեր նահապետական ընտանիքի ավանդական նորմերը: Նա հենց իրենց տանը եղած հարսների օրինակով արդեն որոշակիորեն պատկերացնում էր իր անելիքներն ու պարտականությունները հարս գնալուց հետո: Նա երբևէ չէր դժգոհում տիրող, օրենքի ուժ ստացած սովորույթներից, որոնք խոր արմատներ էին գցել կենցաղում ու հոգեբանության մեջ: Անշուշտ, դրան նպաստել է նաև այն, որ աղջկան ամուսնացրել են այն տարիքում, երբ նա դեռևս չի ունեցել որոշակի կայուն համոզմունքներ և սկզբունքներ: 9–14 տարեկան հասակում ընկնելով նոր ընտանիք, հեշտությամբ հնազանդվում էր այնտեղ տիրող կենցաղավարությանը: Բանագետ Ա. Սահակյանը պատմեց, որ իր մայրը՝ Ցողինար Սարգսյանն իրեն հետևյալ խրատն է տվել. «Աղջիկը հոր տանը կծկած կծիկ է, կեսրանց տանը հոր տան կծիկը կքանդեն, նորից կկծկեն, պիտի դիմանաս, քանի անգամ էլ կծկեն,– ապա շարունակել է,– աղջկա հերն ու մերը կեսրանց տան դռան հետևը դրած են, ինչքան էլ վատաբանեն ու հայհոյեն, դու դիմացի:

թե մանում և թե գործում. հայուհու գործած կոշտ և նուրբ կտավը և մինչև անգամ բրդե գործվածքները ոչ միայն բավականացնում են հայ ընտանիքի պահանջները, այլև տարվում և վաճառվում են օտար երկրներում... Այդ գործվածքները, չնայելով որ ձեռքով և նախնական գործիքներով են պատրաստվում, այնուամենայնիվ իրենց արժանավորությամբ հետ չեն մնալ եվրոպական արհեստանոցների գործվածքներից... Տրապիզոնի, Եվդոկիայի, Վանի, Արզրումի, Բիթլիսի արտադրած նուրբ կտավները, հյուսյալ շապիկները, թավուտ երեսսրբիչները և սավանները, Խարբերդի այծի նուրբ մազից հայտնի գործվածքները, պարսկական կոչված գեղեցիկ և ամուր խալիներն ու կարպետները, որոնք զարմանք են պատճառում մարդուս իրանց բազմազան նկարներով և գույների ճաշակավոր հարմարությամբ... հետ չեն մնալ Լիոնի շալերից – ահա Արևելքի այդ բոլոր գործվածքները ըստ մեծի մասին Թուրքիո և Պարսկաստանի հայուհու ձեռաց գործն է,– գրում է Ա. Ելիսեևը:– Հայուհու աշխատասիրությունը մինչև անգամ առակ է դարձել Արևելքում. թրքական հայտնի առակ կա, որ ասում է՝ «հայուհին նման է անընդհատ պտտող անիվին», մինչդեռ թրքուհին, պարսիկ կինը կամ արաբուհին իր մարդու հարեմից դուրս, օրինակի համար այրիացած ժամանակ, սովորաբար ոչ մի բանի ձեռք զարկել չէ կարողանում, հայուհին, ընդհակառակը, այնպիսի դիրք է բռնում, որ կարողանում է ոտի կանգնեցնել մի ամբողջ հայ ընտանիքը: ... Ընտանեկան կյանքը շատ զարգացած է հայերի մոտ, և Արևելքի բոլոր ազգերի մեջ մենք չենք ճանաչում մի ուրիշ ազգ, որի մեջ այնքան լավ կազմակերպված լիներ ընտանիքը և այսքան ամուր դիրք ունենար կինը, իբրև մայր և իբրև ամուսին: Կարելի է ասել, որ հայը ամենաքնքուշ ամուսինն է Արևելքում» (նույն տեղում):

Աղջկա հերն ու մերը հիմի կեսուրն ու կեսրարն են»: Ըստ երևույթին, նաև սրանով են պայմանավորված եղել վաղ տարիքի ամուսնությունները, որոնք լիովին համապատասխանել են նահապետական գերդաստանի պահանջներին՝ ոչ միայն աշխատող ձեռքերի պակասը լրացնել, այլև հլու, հնազանդ հարս ունենալ[16]:

Աղջիկներից պահանջվում էր հարգանք և հնազանդություն մեծերի, իսկ հետագայում ամուսնու և նրա տան անդամների հանդեպ: Այս շրջանում ծնողները սկսում էին հատուկ ուշադրություն դարձնել աղջկա հագուստին ու զարդարանքին, քանի որ նա արդեն հարսնացու էր համարվում: Մինչամուսնական շրջանի սահմանափակումները յուրովի էին արտացոլում արբունքի հասած աղջկա ու ընտանիքի փոխհարաբերությունը: Դրանց նպատակը աղջկա մասնակի մեկուսացումն էր արտաքին աշխարհից: 12–13 տարեկանում նա ամուսնության համար հասունացած էր համարվում, ուստի պետք է հրաժեշտ տար իր մանկական նախասիրություններին[17]:

Ժողովրդական խաղիկները և չափածո այլ ստեղծագործություններ վկայում են, որ մայրը աղջկան փոքր տարիքից սկսած գործնական և օգտակար խորհուրդներով նախապատրաստում էր իր կյանքի ամենանշանավոր իրադարձությանը՝ հարսանիքին: Օրիորդի շնորհքի, տնարարության ու գեղեցկության համբավի տարածումը ավելի կհեշտացներ նրա ժամանակին ու «շահավետ» ամուսնությանը:

Ամուսնական ծիսաշարի սկզբնական փուլից՝ աղջիկտեսից սկսած, մանկամարդ աղջկա վարքագիծը կտրուկ փոխվում էր: Նրան այլևս արգելվում էր խաղալ տարեկիցների հետ, հաճախակի երևալ հասարակության մեջ: Նշանած աղջիկն օրվա մեծ մասն անցկացնում էր կանանց և իր դիրքի աղջիկների ու հարսների շրջապատում: Նշանդրեքի ողջ ծիսակարգի ընթացքում աղջիկը մարդկանց մեջ էր դուրս գալիս տարեց անձանց ցանկությամբ ու պահանջով միայն և այդ դեպքում էլ ներկայանում էր հուշիկ ու անձայն՝ ջանալով ըստ ամենայնի պարկեշտ, հեզ և խոնարհ երևալ ապագա ամուսնուն ու նրա հարազատներին: Անհանդուրժելի արարք էր համարվում, եթե հարսը նստեր ավագների ներկայությամբ, մնար տղամարդկանց ու տարեց կանանց շրջապատում, նայեր նրանց դեմքերին, կերակրեր երեխային ուրիշների ներկայությամբ ու առանց սկեսրոջ հրամանի և այլն[18]: Նորահարսի առաջին տարվա գործունեությունը սահմանափակվում էր տնային տնտեսության նեղ շրջանակներում: Նորահարսը իրավունք չուներ ճաշ եփելու, հաց թխելու, խմոր հունցելու, տան շե-

---

[16] *Այս մասին տե՛ս Ա. Ս ա ր գ ս յ ա ն. Նորահարսի նկատմամբ կիրառված արգելանքների համակարգը հայոց մեջ.– Զեկուցումների թեզիսներ, Հայաստանի բնակչության տնտեսական և հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նստաշրջան, Երևան, 1987, էջ 54-56:*

[17] *Այս մասին տե՛ս նաև Ա. Ս ա ր գ ս յ ա ն. Կանանց վերաբերող ավանդական արգելանքները հայոց մեջ (պատմազգագրական ուսումնասիրություն).– Մեղմագիր պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 2002, էջ 3-22:*

[18] *Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 206, տ. 9, էջ 40-41:*

րեփը վերցնելու ձեռքը, առանց սկեսրոջը հարցնելու մառան մտնելու կամ որևէ բան տալու հարևանին: Դա ամենամեծ հարսի իրավունքն էր: Նա նաև չէր մասնակցում դաշտային աշխատանքներին:

Նահապետական հայ ընտանիքում գործում էր աշխատանքի սեռատարիքային բաժանման հստակ համակարգ: Տնտեսության հիմնական ճյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը, վարում էին տղամարդիկ, իսկ կանանց պարտավորությունների մեջ մտնում էին տնային տնտեսության վարումը, գյուղատնտեսական հումքի մշակումը, տեսակավորումը, պահեստավորումը. այստեղից էլ՝ «Տղամարդը դրսի պատ է, կինը՝ ներսի» ասացվածքը: Սրա հետ է կապված այն սովորույթը, որ երբ տղա էր ծնվում, պորտալարը գցում էին դուրս՝ եկեղեցու բակը կամ գոմը, իսկ աղջկա դեպքում դնում էին տան ներսի պատի ճեղքում, որպեսզի նա լավ տնտեսուհի դառնար[19]:

Նորահարսին խիստ սակավ էին դուրս թողնում և այն էլ սկեսրոջ կամ մեծ հարսի ուղեկցությամբ: Երիտասարդ կինը այնքան էր սահմանափակված, որ նույնիսկ նրա շարժումները աննկատ չէր մնում: Հարսի մեկ համարձակ նայվածքը, մի բառը օտար տղամարդու հետ իսկույն բամբասանքի առարկա էին դառնում:

Նահապետական ընտանիքում կանանց փոխհարաբերությունները հիերարխիկ բնույթի էին. ամենաստորին աստիճանին գտնվում էր նորահարսը, ամենավերին աստիճանին՝ սկեսուր-տանտիկինը՝ Մեծ նանեն: Ըստ այդ աստիճանակարգության էլ որոշվում էր կանանց դերն ու տեղը ընտանիքում: Մեծ տիկինը գերդաստանի լիիրավ տիրուհին էր և բաժանում էր աշխատանքը կանանց ու հարսների միջև: Նա գլխավոր կենտրոնն էր, որի շուրջը համախմբվում էր ամբողջ ընտանիքը: Տանտեր նահապետը չէր խառնվում նրա գործերին: Առանց տանտիկնոջ թույլտվության ոչ ոք ոչինչ չէր կարող նախաձեռնել: Նրա ձեռքում էին գտնվում մառանի բանալիները: Նա էր հացավորողը, նրա ձեռքի շերեփը իրավունքի խորհրդանիշն էր. սովորույթ, որը լայնորեն տարածված էր հյուսիսկովկասյան ժողովուրդների շրջանում[20]: Նահապետի կնոջը կարող էր փոխարինել մեծ հարսը, որին սկեսուրը դեռ իր կենդանության օրոք նախապատրաստում էր այդ դերին: Երկրորդ հարսը օգնում էր գորգ, կարպետ գործելուն, երրորդը լվացք էր անում, զբաղվում տան ու բակի մաքրությամբ և այլն: Ամենավատ դրության մեջ գտնվում էր տան փոքր հարսը, որն արթնանում էր ամենաառաջինն ու անկողին մտնում ամենաուշը: Ուշագրավ է, որ փոքր հարսը կատարում էր տնային գործեր, լվացք անում, բայց իրավունք չուներ լվալու իր ամուսնու հագուստները, սեղան էր գցում, սակայն դարձյալ իրավունք չուներ ճաշ մատուցելու ամուսնուն. դրանք տան ավագ հարսների իրավասության մեջ էին: Տան մեծ հարսը, ըստ մեր գրառած նյութերի, աշխատանքից հոգնած վերադարձած տեգրերի նկատմամբ նրանց կանանց օգնությամբ հատուկ խնամք ու հոգատարություն էր դրսևորում. եթե հիվանդ էին լինում, անգամ տաշտն էր դնում, լողացնում, տեղավորում անկողնում: Կարևոր

---

[19] *Տե՛ս ԴԱՆ, տ. 11, էջ 88-89:*

[20] *Տե՛ս* Народы Кавказа, т. 1, М., 1960, с. 262.

և պատասխանատու աշխատանքները կատարում էին տարիքավոր, մի քանի զավակների տեր կանայք, օրինակ՝ հաց թխելը, իսկ հարսներն ու աղջիկները նրանց օգնականներն էին: Այս հարցին առանձին ուսումնասիրությամբ անդրադարձել է ազգագրագետ Ա. Սարգսյանը[21]:

Ամուսնական անհավատարմությունը խիստ հազվադեպ էր, և եթե լինում էին դեպքեր, պատժվում էին նույնիսկ մահով: Եթե անհավատարիմ կնոջ եղբայրը կամ ամուսինը սպանում էր նրան, հասարակական կարծիքը միշտ արդարացնում էր այդ գործողությունը: Եթե ամուսինը կուլ էր տալիս կնոջ անառակությունը, տվյալ ընտանիքը, ամբողջ ազգատոհմը արատավորվում էր, և համայնքում, որպես պարսավանք, նրանց կոչում էին այդ կնոջ անունով, ասենք՝ «Սոնենց տներ»: Հաճախ նման պախարակված ընտանիքը հեռանում էր համայնքից:

Ավանդաբար ձևավորվել են տարբեր կենցաղային սովորույթներ, որոնք, ըստ ամենայնի, կնոջ նկատմամբ սոցիալական վերահսկողության միջոցներ են: Դրանցից են նաև հագուստի մեջ կիրառվող սահմանափակումները: Կնոջ հագուստում ամրագրված արգելքները միտված էին ընդգծելու նրա հնազանդությունը, քողարկել-ծածկելու կանացիությունը, բարեմասնությունները, մարմնի աչքի ընկնող հատվածները, նրան դարձնելով նվազ գրավիչ: Սասունցի կնոջ հագուստի և արտաքին հարդարանքի հանդեպ այնպիսի սահմանափակումներ էին կիրառվում, որոնք կապված էին տարիքային տարբերությունների և սոցիալական մի խմբից ու կարգավիճակից մյուսին անցնելու հետ: Հագուստի և արտաքին հարդարանքի մեջ արգելքներ կիրառվում էին նորահարսի, մասամբ նաև տարեց կանանց նկատմամբ: Տարիքային բոլոր խմբերին բնորոշ էր այն, որ նրանք հագնում էին երկար թևքերով, կրծքամասը փակ, մինչև կրունկները հասնող զգեստ: Կնոջ մերկ թևերը, ոտքերը, չպետք է երևային: Հագուստի մեջ կարելի է առանձնացնել նաև այրի կնոջ հագուկապը, որն աչքի էր ընկնում մուգ գույներով և զարդերից զուրկ լինելով:

Տարազի մեջ կնոջ նկատմամբ կիրառվող սահմանափակումներն ավելի ցայտուն են արտահայտված գլխի հարդարանքում: Հարսնացուն, մտնելով ամուսնական տարիքային խմբի մեջ, կրում էր գլխի բարդ հարդարանք: Գլխի ծանր հարդարանքները, որոնցով կապվում էին քիթն ու բերանը, օրինականացնում էին չխոսկանության հնամենի սովորույթները: Ամուսնացած բոլոր կանայք, տարիքից անկախ, իրավունք չունեին բաց գլխով ման գալու: Կնոջ գլուխը բաց տեսնելն ամոթ էր համարվում և դատապարտվում հասարակության կողմից: Գլխաշորը, աղջկա տարիքային հասունացման վկայական լինելուց բացի, համարվել է նաև նրա խորհրդանիշը: Ահա թե ինչու Սասունում նշանդրեքին խնամախոսներն ասում էին. «Եկել ենք մի լաչակ խնդրելու»: Բանասացները վկայում էին, որ երբ անգամ 8–9 տարեկան տղա էր տուն մտնում, առանձնացած տարեց կինը մազերը սանրելիս ընդհատում էր հարդարումը և շալը գցում գլխին:

---

[21] *Տե՛ս Ա. Ս ա ր գ ս յ ա ն. Կանանց վերաբերող ավանդական արգելանքները հայոց մեջ…, էջ 3-22:*

Եթե մինչև հարսանիքը հարսնացուն մարդկանց երևում էր բաց երեսով և դեմքը թաքցնելու միակ միջոցը գլուխը խոնարհելն էր, ապա, հարսանիքի առթիվ զգեստավորվելու պահից սկսած, նրա դեմքը ծածկվում էր քողով[22]*: Երեսը քողով ծածկելը նորահարսի առաջնահերթ պարտականությունն էր, որը ծագում էր նշանադրության կամ պսակի օրինականացման պահից և իր ուժը պահպանել է մինչև XX դարասկիզբը՝ առավելապես սովորութական իրավունքի ուժով: Այն համապատասխանում էր կանոնական իրավունքի ոգուն և սկզբունքներին*[23]*: Նորահարսի այդ պարտականությունը ժամանակավոր էր և ծառայում էր անաղարտ սերունդ կամ ժառանգ ունենալու նպատակին: Ամուսնական քողը կրելու ժամկետը տատանվում էր 15 օրից 7 տարի: Սովորաբար 2–3 երեխա ունենալուց հետո էր միայն բացվում հարսի քիթն ու բերանը: Այն շորը, որով ծածկվում էր քիթն ու բերանը, կոչվում էր սավան*[24]*: Դրանից հետո Սասունի կանայք գլխաշոր էին կրում, որը ծածկում էր ծնոտն ու բերանը*[25]*:*

Սասնա Լեռնային Գալիոկ և այլ գյուղերում հարսի քողը հանվում էր հայրական տուն դարձից *հետո, սկեսրոջ ձեռքով և խորհրդանշում էր նրա՝ ընտանիքի լիարժեք անդամ դառնալու հանգամանքը: Սակայն քողը վերցնելուց հետո, ինչպես և գերդաստանի մյուս կանայք, նորահարսը ևս հատուկ եղանակով փաթաթում և ծածկում էր գլուխն ու դեմքը՝ տեսանելի դարձնելով միայն աչքերը և քիթը: Այստեղ քրդերի հարևանությամբ ապրող հայուհիները, երբ մի քանի զավակի մայր էին դառնում, կարմիր քողի փոխարեն սպիտակն էին կրում: Հասակավոր կանայք հանդիսավորությամբ կարմիրը փոխում էին սպիտակով. այդ օրից կինը արտոնություն էր ստանում երեսը կիսով չափ բաց անելու և ընտանիքի մի քանի անդամների հետ խոսելու, բայց ոչ տան մեծերի*[26]*: Հովտային ուրիշ շրջաններում հարսի քողն իջնում էր մինչև կուրծքը: Քողի առկայությունը երբեմն հնարավորություն չէր տալիս կնոջը դեմքով ճանաչելու: Երեսը վարագուրող ամուսնական քողը հարսն իր ձեռքով բարձրացնում ու բացում էր միայն երեխաների ներկայությամբ՝ խոսելիս կամ ուտելիս*[27]*:*

Ըստ իրինդեցի բանասաց Խաչատուր Խաչիկանյանի՝ Խութի Դաշտադեմ և հարևան հայաբնակ գյուղերում կանայք բերանները պարտադիր ծածկում էին գլխաշորով՝ անգամ իրենց հասակակից տղամարդկանց ներկայությամբ, իսկ հարսները մինչև առաջին երեխան ունենալը երեսներին քող էին կրում: Նա-

---

[22] *Տե՛ս ԴԱՆ, տ. 4, էջ 110-111: Քողն Աղձնիքում հայտնի էր* քողք, քողկած, շարշուր, յազմա *անվանումներով:*

[23] *Ղազար Փարպեցուց և այլ պատմիչներից, ինչպես նաև ազգագրությունից հայտնի է, որ նորահարսը պարտավոր էր երեսը ծածկել քողով, իրավունք չուներ տղամարդկանց և օտարի աչքին երևալ բաց երեսով, պարտավոր էր պահպանել «հարսնության ամոթը», դուրս չգալ իր սենյակից (տե՛ս Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 117-118, 240):*

[24] *Տե՛ս ԴԱՆ, տ. 9, էջ 40-41: Տե՛ս նաև Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Խուսափման սովորույթի դրսևորումները աղձնիքահայերի ընտանեկան կենցաղում. – «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 2005, № 1, էջ 147:*

[25] *Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 50-51:*

[26] *Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 37-38:*

[27] *Տե՛ս ԴԱՆ, տ. 4, էջ 38-39, տ. 8, էջ 88, տ. 9, էջ 40-41:*

մուսը թույլ չէր տալիս ջահել կնոջը բաց դեմքով երևալ տղամարդկանց, հատկապես սկեսրայրին ու քավորին: Եթե սկեսրայրը տանն էր լինում, հարսը պետք է ձեռքերը թաքցներ գոգնոցի տակ: Եթե կնոջ վերաբերյալ ասեին՝ «երեսը բացված կին է», նույնն է, թե ասեին՝ լիրբ կամ անզգամ է: Հաճախ եթե հարսը լինում էր «գոթի» (տգեղ) կամ «ծաղկի սբնոտ» (ծաղկատար), ապա այդ մասին իմացվում էր միայն երեխա ունենալուց ու քողը երեսից հանելուց հետո[28]*: Ամոթալի ու անպատվաբեր էր համարվում հարսին հերարձակ, ինչպես նաև ոտնաթաթն ու կրունկը բաց տեսնելը: Հարսի դեմքը բացելու արարողությունը հայտնի էր որպես «երեստեսնուկ»: Երիտասարդ աղջիկներին և կանանց ընդհանրապես արգելվում էր կտրել մազերը, ներկել աչքերը, միայն ձեռքերն էին հինա դնում, որը կանանց մարմնի խնամքի միակ թույլատրելի և ընդունելի ձևն էր: Երիտասարդ հարսներն իրավունք չունեին մազերը սանրել ավագ տարիքի մարդկանց ներկայությամբ*[29]*: Եթե հարսը սանրվելիս լիներ և սկեսուրը ներս մտներ, ապա պարտավոր էր անմիջապես ծածկել գլուխը: Մազերը թաքցնելու սովորույթի հիմքում ընկած է այն մտայնությունը, թե հերարձակ, գլխաբաց կինը կարող է նաև դժբախտության պատճառ դառնալ: Փաստորեն, հայոց մեջ ընդունված բարոյահրավական օրենքները դրոշմ են թողել ոչ միայն ընտանեկան-հասարակական հարաբերություններում, կնոջ վարվեցողության կանոններում, այլև ազդել են հագուկապի, արդուզարդի վրա:*

Քողի կիրառությունը կապված է կնոջ ներփակ կյանքի ու չխոսկանության հետ: Թերևս դա կապված է նաև սեռական արգելքի հետ: Գ. Սրվանձտյանցի հավաստմամբ, Տիգրանակերտում հայ կանայք և աղջիկները փողոց դուրս գալիս ծածկվում էին սպիտակ կամ կապույտ ծածկոցներով՝ սավաններով, մինչդեռ գյուղերում դրա կարիքը չէր զգացվում, քանի որ այնտեղ միայն հայերով են շրջապատված եղել[30]*: Քրդերի և թուրքերի բռնություններից խույս տալու նպատակով քաղաքում հայ կինը չէր կարող դուրս գալ առանց ուղեկցության կամ առանց ծածկվելու: Հայերը թուրքական թաղամասերով ազատ, համարձակ անցնել չէին կարող: Հայ կանայք եկեղեցի, շուկա գնալիս կամ, առհասարակ, փողոցով քայլելիս ստիպված էին մինչև աչքերը շալերով ծածկվել, որպեսզի չնկատվեր նրանց գեղեցկությունը: 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետություն թուրքական ներխուժումների ժամանակ արևմտահայ փախստական երիտասարդ կանայք օտարների ձեռքը չընկնելու նպատակով դեմքներին ծեծած սխտոր էին կապում՝ վերքոտ ու անհրապույր տեսք ունենալու համար*[31]*: Ինչպես մահմեդականների շրջապատում, հայոց մեջ էլ ամուսնու հետ կնոջ հասարակության մեջ դուրս գալը չէր խրախուսվում: Գերդաստանում խստորեն արգելվում էր աղջկան տղայի զգեստներ հագցնել. Բաղեշում նման դեպքերում աղջկան* կզոոլան *էին անվանում, իսկ տղան աղջկա գլխաշոր կրելիս ստանում էր ստորացուցիչ* կզիկ (ղզիկ) *բնորոշումը: Ըստ տեղական հայ*

---

[28] *Տե՛ս ԴԱՆ, տ. 11, էջ 9-10:*

[29] *Հմմտ.՝ Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Անիծած հարսը.– Երկեր 10 հատորով, հ. 3, Երևան, 1990, էջ 107-109: ԴԱՆ, տ. 2, էջ 206, տ. 9, էջ 40-41:*

[30] *Տե՛ս Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Թորոս Աղբար, հ. Բ.– Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 430:*

[31] *Մոր պատմած այս տեղեկությունը մեզ հայտնեց Ի. Սնիչյանը:*

բնակչության պատկերացումների, եթե տղան հագներ աղջկա շորեր, ապա կկարծվեր, որ «խերը կփախնի տնից», որդեղենը (արական սեռը) տնից կպակասի, տղա երեխայի քոքը (արմատը) կկտրվի: Ըստ սասունցիների պատկերացումների՝ դրանով տղան նաև կհավասարվեր աղջկան, մինչդեռ նա ավելի «թանգ է»:

Առավել խիստ էին հարսի խուսափումները ամուսնու ծնողներից և մերձավորներից: Նստելիս պետք է դեմքը քողարկեր գլխաշորով, մեջքով չնստեր դեպի մարդիկ: Մեծերի, հատկապես սկեսրայրի ներս մտնելիս հարսն արագ պետք է ոտքի կանգներ, գլուխը խոնարհեր, ձեռքերը պահեր գոգնոցի տակ կամ արագ հեռանար. չէր մտնում այն հարկաբաժինը, ուր գտնվում էր վերջինս, չէր նայում նրա երեսին, հարցերին պատասխանում էր գլխի շարժումով[32]: Նորահարսը օրվա մեծ մասն անցկացնում էր իր անկյունում, պարտավոր էր ամբողջ ժամանակ լռել: Ամուսնու հետ նա խոսում էր գաղտնի, երբ երրորդ անձ ներկա չէր լինում: Չխոսկանությունն ընտանիքի տարբեր անդամների հետ ժամանակային տարբեր սահմանափակումներ էր ընդգրկում: Խուսափումն առավել թույլ էր արտահայտվում հարսի ու ավագ տեգրերի միջև և էլ ավելի թույլ՝ հարսի ու սկեսրոջ միջև՝ կապված տնտեսության համատեղ վարման հետ: Այս դեպքում էլ արգելքների վերացումը կատարվում էր սկեսրոջ առաջարկությամբ: Հարսը տեգրերի հետ չէր խոսում մինչև 2–3 երեխա ունենալը[33], տալերի հետ՝ մինչև ամուսնության մեկ տարին լրանալը, սկեսրոջ հետ՝ սովորաբար առաջին երեխան ունենալուց հետո, բայց հուշիկ և գլուխը խոնարհած: Հարսը քավորի և նրա ընտանիքի հետ ոչ միայն խոսելու իրավունք չուներ, այլև նրանց ներկայությամբ երևալը մեղք էր համարվում: Նոր հարսները պարտավոր էին նաև հարևան տղամարդկանց, հատկապես ծերերի նկատմամբ, իբրև հարգանք, չխոսկանություն պահպանել մինչև 2–3 երեխա ունենալը: Բացարձակ չխոսկանության փուլում հարսը ընտանիքի անդամների հետ հաղորդակցվում էր ժեստերի լեզվով կամ դեռահաս երեխաների միջոցով: Երբ չխոսկանություն պահպանող հարսը ցանկանում էր ինչ-որ բան հաղորդել, ապա տվյալ անձի ներկայությամբ դիմում էր իր երեխային կամ երեսը շրջելով դեպի պատը՝ լսելի ձայնով հաղորդում էր ասելիքը: Խոսելու առաջարկով դիմում էր տան ավագը, խոստանալով նրան որևէ նվեր կամ ասելով՝ «Այս տանն ամեն ինչ քոնն է, խոսիր»[34]: Սակայն խոսելու վերաբերյալ պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո էլ կանայք երկար ժամանակ ցածրախոս էին լինում և խուսափում էին անմիջական հաղորդակցումից: Հայաստանի պատմաազգագրական գրեթե բոլոր շրջաններում սահմանափակումներն ընդհանուր են, տարբեր են միայն խուսափման ժամկետները: Չխոսկանության տևողությունը կախված էր տարբեր շրջանների սոցիալ-քաղաքական, տնտեսա-

---

[32] *Տե՛ս ԴԱՆ, տ. 8, էջ 88-89, տ. 9, էջ 40-41:*

[33] *Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 14, 84, տ. 2, էջ 207, տ. 4, էջ 14-15, 35, 40:*

[34] *ԴԱՆ, տ. 1, էջ 14, 84, տ. 3, էջ 51-52, տ. 8, էջ 88, տ. 9, էջ 41:*

մշակութային իրավիճակից, ազգային ավանդույթների պահպանվածության աստիճանից[35]*:*

Բաղեշցի բանասաց Աղավնի Ասատրյանը հարսի չխոսկանությունը բացատրեց իրրև հարգանքի և պատվի նշան. «Քանի պուտուկ ծածուկ ա, խուփը բերնին ա, շուրան (համն ու հոտը) չելեր ա, հարսի բերան փակ ա, երբ որ բերան բացվավ, շուրան դուրս եկավ, հարսի բերան կբացվի» [36]*:*

Մինչև բազմազավակ մայր դառնալը հայ կինը կաշկանդված էր, որից հետո միայն վայելում էր գերդաստանի ազատ հարաբերություններն ու հարգանքը: Երիտասարդ կանանց մասին սովորաբար ասվում էր. «Կնիկմարթ ձեռաշոր է», «Կնիկմարդ պետք է փակ լինի, իրավունք չունի օտար կամ դրացի մարդու թև ընկնի», «Ամուսինը կնոջ թագավորն է», «Տղամարդ որ կա՝ գլուխ է, կնիկ որ կա՝ ոտ է» և այլն[37]*: Կինը պարտավոր էր լինել ամուսնուն հավատարիմ, ենթակա նրա ծնողներին ու մերձավորներին, անտրտունջ կատարել իր վրա դրված պարտականությունները:*

Ընտանիքում և հասարակության մեջ առանձնապես պատիվ չուներ ամուլ կինը: Նրան վերաբերվում էին իրրև անպտուղ ծառի, «չոր կոճի»: Տղամարդկանց հավասար ծանր ու դժվարին աշխատանքներ կատարելու համար այդպիսինն ընտանիքում նաև արժանանում էր կարեկցանքի ու խղճահարության: Մինչդեռ, որքան շատ արու զավակ ունենար կինը, այնքան կշիռ և իրավասություն էր ստանում ընտանիքում ու հասարակության մեջ: «Ես տասը տղամարդու մայր եմ»,– լսվում էր շատ անգամ նրանից: Բազմազավակ կանանց գլխաշորը դիտվում էր որպես սրբություն և տվյալ ընտանիքի պատիվը: Դրա միջոցով հաճախ հաշտեցնում էին կռվող կողմերին[38]*:*

Ընտանեկան վարվելակարգի մեջ առանձնանում են նաև ծնողների ու երեխաների և ամուսնական զույգերի միջև գոյություն ունեցած որոշակի սահմանափակումները: Ըստ այդ նորմերի՝ ծնողները, փաստորեն, քողարկում էին իրենց զավակներին սիրելն ու գուրգուրելը: Մեծ վիրավորանք ու անարգանք էր համարվում մեծերի կամ օտար մարդկանց ներկայությամբ երեխային գուրգուրելը: Երբ հայրը երեխային գիրկն առած նստած էր, և այդ պահին ներս էր մտնում տան մեծը, նա իրեն զգում էր հանցանքի մեջ բռնվածի դերում: Բարոյադաստիարակչական տեսակետից գերդաստանի տղամարդիկ խուսափում էին իրենց կանանց հետ ցերեկը տան մեջ առանձնանալուց, օտարների և տնեցիների ներկայությամբ կնոջ հետ նուրբ վարվելուց. առանձին խոսակցություն նրանց միջև չէր լինում: Գերդաստանում տիրում էին տղամարդու՝ դեպի իր կինը և երեխաները սառը, արտաքուստ անտարբեր հարաբերություններ:

---

[35] *Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Խուսափման սովորույթի դրսևորումները Աղձնիքահայերի ընտանեկան կենցաղում, էջ 145-154:*

[36] *ԴԱՆ, տ. 11, էջ 10:*

[37] *ԴԱՆ, տ. 3, էջ 47, տ. 4, էջ 37, 107, տ. 9, էջ 33, 41:*

[38] *Եթե կռվի պահին կանայք իրենց գլխաշորը փռեին կռվողների արանքում, ապա այն տրորելը սրբապղծություն էր համարվում, և կռիվը դադարում էր (տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Երևան, 2004, էջ 99):*

Խուսափման սովորույթի *դրսևորումներն ամուսինների հարաբերություններում հասնում էր այն աստիճանի, որ նրանք ուրիշների ներկայությամբ ոչ միայն չէին խոսում իրար հետ, այլև չէին տալիս միմյանց անունները: Յուրաքանչյուր կոնկրետ միջավայրում ձևավորվել էր արտահայտման որոշակի ձև: Հարգի էր կնոջը ոչ թե անձնանվամբ, այլ նրա ծննդավայրի կամ ծնողների անունով դիմելը: Սովորույթի համաձայն՝ ամուսինը իր կնոջ հանդեպ ուրիշների ներկայությամբ ավելի քիչ հարգանք պետք է ցույց տար, քան մյուս հարսների: Կինն էլ ավելի մեծ հարգանք էր ցուցաբերում տեգրերի հանդեպ, քան ամուսնու: Նույնիսկ ամուսնու՝ պանդխտության գնալու ժամանակ կամ մահվան դեպքում կինը չպետք է բարձր ձայնով լաց լիներ, դա մեծ ամոթ էր համարվում:*

Գերդաստանում իրար դիմելիս գրեթե բոլորն էլ խուսափում էին արտասանել անունները՝ նրանց չարքերից զերծ պահելու նպատակով: Անգամ տարեց կինն իր ամուսնու մասին ասում է «տղուս» (մեծ տղայի անունը տալով) հերը կամ այսինչի (սկեսրայրի անունը տալով) տղեն, կամ էլ շատ մեծ տարիքի լինելու դեպքում՝ «մարդս»:

Չնայած կնոջ արտաքուստ պարփակված վիճակին, հասարակական կյանքին ոչ ակտիվ մասնակցությանը, այնուամենայնիվ, պարկեշտության ու աշխատասիրության շնորհիվ նա հարգված էր ընտանիքում: Ավանդույթի խորքային դրսևորմամբ հայկական ընտանիքում ներընտանեկան հարաբերություններում ընդունված է եղել տան մեծ տղամարդու գլխավորությունը՝ մեծ տիկնոջ խորհրդատվական դերով: Ընտանիքում նրանց հարգում ու ենթարկվում էին բոլորը[39]: Հայերը կնոջ նկատմամբ վերաբերմունքը համարում էին «պատվի հարց»:

Ընտանիքում և հասարակության մեջ կնոջ դերի ու պահվածքի մասին բանահյուսական բազմազան նյութեր են պահպանվել՝ առածներ, դարձվածքներ, թևավոր խոսքեր և այլն: Օրինակներ՝ «Կնիկդ որ լավ ըլնի, մի էթա հարսանիք, տանըդ ամեն օր հարսանիք ա ու հարսանիք. թե կնիկդ փիս ըլնի, մի էթա մեռլատուն, տունդ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն», «Լավ կնիկը տուն ու տեղ է, վատ կնիկը՝ ցավ», «Մեռնի քո կնիկ, ավրի քո տնիկ», «Տուն թող կնիկ էլնի, թող գեշ էլնի», «Կնիկը թանկ ի ուր գլխավորով, տղեն՝ իր խեր ու մերով», «Կնիկը տղամարդու հոգին ա», «Կնիկ մարդ որ կա՝ մարդու կյանքն ա» և այլն[40]:

Դիպուկ են նկատել օտար ճանապարհորդները, որ հայ կնոջ դիրքը չի կարելի համեմատել Արևելքի կնոջ հետ, որովհետև նա օգտվում է մեծ հարգանքից, որպիսին, թերևս չունի նույնիսկ եվրոպացի կինը: Ժողովրդական սովորույթներն ուսումնասիրելու նպատակով 1843 թ. Հայաստան այցելած Օ. Հակստհաուզենը նշում է, որ հայկական գերդաստանի ներսում կանանց վիճակը միանգամայն տարբեր է Ասիայի այլ ժողովուրդների հետ համեմատած.

---

[39] *Տե՛ս Կ. Սերոբյան. Ներընտանեկան հարաբերությունները Շիրակում (XIX դարի կեսեր).– Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2007, էջ 259-260:*

[40] *Տե՛ս Ա. Ղանալանյան. Հայկական առածանի, Երևան, 1951, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:*

հայուհիներն ունեն. «հաւասարութիւն իրաւանց և արժանաւորութիւն… առ մահմեդականս կանայք ի ծառայ արանց լինել ծնեալք են քան թէ հաւասար նոցին … Եթէ այրն մեռաւ յառաջ քան զնա, կինն ունի զտեղի նորա և յիրաւունս ի մէջ գերդաստանին. ամենեքին հնազանդին նմա և յարգեն որպէս զնոյն ինքն զհայրն գլխաւորն տան (որպէս էր մայրն Աբովեանի), ուստի և չէ մարթ հաւասարել զնա ընդ արեւելեան կանայս. զի նա այսչափ յարգ և վարկ ունի՝ որչափ և ոչ կանայք Եւրոպիոյ»[41]: Ռուս նշանավոր ճանապարհորդ ազգագրագետ Ն. Ալեքսանդրովը գրում է. «Կանանց դաստիարակումը զերծ չէր որոշ խստություններից, բայց այն չի կարելի անվանել ոչ ստրկություն, ինչպես մահմեդականների մոտ, ոչ ճնշում»[42]: Ահա թե ինչ է գրում Ա. Ելիսեևը. «Եվ, հիրավի, շատ տեղ այդ երկրում (խոսքը Թուրքիայի մասին է.– Ռ. Ն.) չկա մեկ տուն, որ կառուցած չլինի հայը, չկա մի տեղական կտոր, որ գործված չլինի հայի ձեռքով, չկա պտուղ, որ հայի այգուց դուրս եկած չլինի: Այդ բոլորի համար, անկասկած, աշխատասեր և եռանդուն հայը շատ բանում պարտական է յուր գլխավոր օգնական կնոջը: Միշտ գործունյա հայուհին ճշմարտապես կարող է համարվել հայ ազգության գլխավոր հենարանը: Հայ կինը այն շաղախն է, որ միացնում և ամրապնդում է հայ գերդաստանը, ընդ սմին և հայ ազգությունը գլխովին... անկասկած, Արևելքում այդ արժանավորագույն կանանցից մեկն է հայ կինը... Հայուհին ամուր պահպանելով գերդաստանի միությունը, ամուսնական անկողնու մաքրությունն և ընտանեկան օջախի սրբությունը, դորանով պահպանել է քայքայման հաճախ մերձ եղած յուր ազգի ամբողջությունը... Անխոնջ աշխատասիրությունը հայուհու կյանքի անբաժան հատկանիշն է՝ գլխավոր առաքինություններից մեկը»[43]:

Հայ կնոջ տնտեսվար ու գնահատված դերի մասին է բանագետ Ս. Հարությունյանի հետևյալ բնորոշումը՝ «Հա անկնիկ տուն, հա անալյուր ջաղաց»: Տղամարդու պատիվը բարձրացնողն էլ է կինը, պատվազուրկ անողն էլ:

Ամփոփելով ասենք, որ հայկական ավանդական ընտանիքում կինը հարգանք է վայելել: Իսկ կանանց նկատմամբ կիրառվող խուսափման ու սահմանափակումների տարաբնույթ ձևերն ու սովորույթները հիմնականում ձևավորված հասարակական-քաղաքական անբարենպաստ իրավիճակներում ու պետականության բացակայության ժամանակաշրջաններում հայ ընտանիքի բարոյական հիմքերն ամուր պահելու նպատակ էին հետապնդում և սերունդների համար դաստիարակչական նշանակություն ունեին:

---

[41] *«Բարօն Օգոստոս ֆօն Հակստհաուզենայ ճանապարհորդութիւն յայս կոյս Կովկասու, այն է ի Հայս և ի Վիրս», թարգմ. Արիստակէս վարդապետ Սեդրակեան, Վաղարշապատ, 1872, էջ 194-199:*

[42] *Տե՛ս* Н. А. А л е к с а н д р о в. Закавказье. Армяне (Чтение для народа). М., 1901, с. 15.

[43] *Ա ն. Զ ա ք ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 99–100:*

ЖЕНЩИНА В ТРАДИЦИОННОЙ АРМЯНСКОЙ СЕМЬЕ

(По этнографическим обычаям сасунцев)

РАФИК НАГАПЕТЯН

Р е з ю м е

В патриархальной армянской семье женщина была ограничена рамками национальных традиций. Разнообразные ограничения поведения женщины имели целью сохранять моральные основы семьи, передавать эти принципы молодому поколению, в неблагоприятных общественно-политических условиях.